ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

✉ 2701 ՀՀ Շիրակի մարզ գ.Ամասիա փողոց 2 N 19
☎ 0 (246) 2-28-27, էլ. փոստ amasiaak@mail.ru
N ԱԱԿ
10 մարտ 2026թ.

Ֆ/Ա Ասյա Ղաբուզյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին/

Հարգելի տիկին Ղաբուզյան,

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և Ֆ/Ա Ասյա Ղաբուզյանի (այսուհետ՝ նաև Կատարող) միջև 2026թ.-ի փետրվարի 20-ին կնքվել է թիվ ԱԱԿ-ՄԱԾՁԲ-26/5 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն), իսկ Գնորդը պարտավորվում էր վճարել դրա համար:*

Սակայն կնքված պայմանագրի կատարման փուլում Պատվիրատուին հայտնի է դարձել, որ ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, հետևաբար կնքված Պայմանագիրը նշված հիմքով ենթակա է միակողմանի լուծման, մասնավորապես **<<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ**-ն Առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալությունից ստացել է թիվ ՎԱ/14/7198-2026 գրությունը այն մասին, որ **Ֆ/Ա Ասյա Ղաբուզյանի** կողմից չի կարող իրականացվել լիցենզավորված գործունեություն, քանի որ չունի համապատասխան մասնագիտական կրթություն վերոնշյալ լիցենզիայում առկա տեսակներով գործունեության համար:

Պայմանագրի 7.3-րդ կետի համաձայն՝ Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն և Կատարողը չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի և պատվիրատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, քանի որ Պայմանագրի գործողության ընթացքում կատարողի կողմից ծառայություն չի մատուցվել և վճարում չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ԱԱԿ-ՄԱԾՁԲ-26/5 ծածկագրով գնման պայմանագրի 8.3 կետը <<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն որոշում է 2026թ.-ի մարտի 06-ից Պայմանագիրը միակողմանի լուծել՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ –ի

Տնօրեն՝ Աքսաննա Պողոսյան